ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք.Գորիս, Անկախության 2

Հեռ.՝ 0284 2-40-20

Էլ. փոստ՝ itekngo@gmail.com

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սույն զեկույցը հրատարակվել է NED (National Endowment for Democracy) կազմակերպության աջակցությամբ իրականացված ծրագրի շրջանակներում:

Զեկույցի ամբողջ բովանդակության համար պատասխանատու է <<Իրավունքների Տեղեկատվական Կենտրոն>> (ԻՏԵԿ) ՀԿ-ն

Իրավունքների Տեղեկատվական Կենտրոն ՀԿ-ն շնորհակալ է բոլոր նրանց, ովքեր մասնակցություն են ունեցել ծրագրի իրականացման, զեկույցի պատրաստման գործընթացներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կիրառական նախաբան……4

1.Անվճար իրավաբանական օգնության տրամադրման մոնիթորինգի խնդիրները և մեթոդները…….....6

2.Ժամկետային զինծառայողներին տրամադրվող անվճար իրավաբանական օգնության իրավունքի օրենսդրական կարգավորումը ……....8

2.1. Պաշտպանության իրավունքի իրավական հիմքերը……...9
2.2.Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության օրենսդրական կարգավորումը…… ……..…....10

3. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարաններ և դատավարության գործընթաց

3.1. Դատարանի պայմանները, վայրն ու տեղակայումը …… ……...12
3.2. www.datalex.am տեղեկատվական համակարգի մատչելիության և արտագնա դատական նիստերի հիմնախնդիրները …… ……13
3.3.Դատական նիստերի ձգձգումներ …….. ……....15
3.4.Նիստերի ձայնագրառումների և տեսանկարահանումների հետ կապված հիմնախնդիրներ ……....15

4. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ժամկետային զինծառայողների մասնակցությամբ նշանակված դատական գործեր
4.1 Նիստերի կայացման վիճակագրություն ……....17
4.2.Զինծառայողներին առաջադրված մեղադրանքների /քր.օր.հոդվածներ/ վիճակագրություն……..……19
4.3.Դատական նիստերի արագացված կարգ ……..……..…20

5.Հանրային պաշտպանների գործունեության արդյունավետությունն ու ծանրաբեռնվածությունը…….... 22
6.Հարցումներ, հարցազրույցներ……..……28
7.Ամփոփում……....30
8.Առաջարկություններ……..33
Հավելված 1

Հավելված 2

Հավելված 3

Կիրառական նախաբան ⇧

Սույն զեկույցը հրատարակվել է **<<Անվճար իրավաբանական օգնություն զինծառայողներին>>** ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն էր՝

Նպաստել Հայաստանում ժամկետային զինծառայողների անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի մատչելիության ապահովմանը :

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում յուրաքանչյուր օր քննվում են 5-8 դատական գործեր,/տես http://datalex.am/dl_hearings.php?# / որոնցում որպես մեղադրյալ ներգրավված են լինում ժամկետային զինծառայողներ, որոնք ունեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում զգալիորեն շատ են ժամկետային զինծառայողներին վերաբերվող գործերը, որովհետև հայ-ադրբեջանական կոնֆլիկտի պատճառով Սյունիքի մարզում տեղակայված զինվորական զորամասերում կամ սահմանային դիրքերում տեղակայված զինծառայողների միջև տեղի ունեցող միջադեպերի վերաբերյալ դատական գործերը քննվում են հատկապես Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում : Օրինակ, ըստ http://datalex.am/dl_hearings.php կայքի, 2016թ փետրվար-ապրիլ ընկած ժամանակահատվածում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված 399 դատական գործերից 271-ը / 67 %/ վերաբերվում է զինծառայողներին:

Ժամկետային զինծառայողների մասնակցությամբ հանցագործությունների բացահայտման ,նախաքննության և դատական պրոցեսների ընթացքում թույլ տրվող հնարավոր խախտումները, զինծառայողներին տրամադրվող իրավաբանական օգնության մատչելիության և արդյունավետության խնդիրները բացասական բարոյահոգեբանական ազդեցություն են թողնում ինչպես զինվորականների, այնպես էլ նրանց ծնողների, հարազատների, հասարակության վրա, ինչը զուգահեռաբար նաև ազդում է պետության ռազմական անվտանգությանը :

Դատական պրոցեսներում ներգրավված ժամկետային զինծառայողներին տրամադրվող անվճար իրավաբանական օգնության մատչելիության և արդյունավետության ուսումնասիրման նպատակով The National Endowment for Democracy (NED) աջակցությամբ Իրավունքների Տեղեկատվական Կենտրոն ՀԿ-ն 2016թ մարտ-օգոստոս ժամանակահատվածում իրականացրել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված դատական նիստերի մոնիթորինգ , որի արդյունքում պատրաստվել է սույն զեկույցը: Զեկույցում առկա տվյալները և առաջարկությունները կարող են օգտակար լինել ոլորտի հիմնախնդիրներով մտահոգ մասնագետների կամ կազմակերպությունների համար՝ համակարգային և օրենսդրական փոփոխություններ խթանելու նպատակով :

1.Անվճար իրավաբանական օգնության տրամադրման մոնիթորինգի խնդիրները և մեթոդները

Մոնիթորինգն իրականացվել է 2016թ մարտից մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում:

Ծրագրի իրականացման շրջանակներում դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել դատական գործընթացներում ներգրավված ժամկետային զինծառայողների իրավունքների խախտման ռիսկերը՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետության տեսանկյունից,
- ուսումնասիրել գործող օրենսդրական դաշտը և իրավակիրառ պրակտիկան,
- բացահայտել հանրային պաշտպանների գործունեության արդյունավետությանը խոչընդոտող համակարգային խնդիրները,
- ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված անվճար իրավաբանական օգնության տրամադրման հասանելիությանն ու բարելավմանը:

Մոնիթորինգն իրականացրել են 11 կամավորականներ՝ համագործակցելով ՀԿ-ի ծրագրային թիմի հետ : Ընտրված կամավորականների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ ծրագրի խնդիրների և մեթոդաբանության, ինչպես նաև քրեական դատավարության օրենսդրության, արդար դատաքննության միջազգային չափանիշների, մոնիթորինգի հարցաշարի կազմման և լրացման կարգի վերաբերյալ:

Ծրագրի համակարգողի կողմից յուրաքանչյուր օր դատական դեպարտամենտի կողմից սպասարկվող տեղեկատվական www.datalex.am կայքից և դատարանների ֆիքսված հեռախոսահամարներին պարբերաբար կատարված հեռախոսազանգերի օգնությամբ կազմվել է զինծառայողներին վերաբերվող դատական գործերի ցուցակը: Յուրաքանչյուր դատական գործի դիտարկման համար ընտրվել է 1-3 դիտորդ, որոնք իրականացրել են դատական նիստերի դիտարկումները:

Մոնիթորինգն իրականացվել է 3 փուլով.

1-ին փուլ - նախապատրաստական, որի ընթացքում ուսումնասիրվել է ոլորտին վերաբերող օրենսդրությունը, մշակվել են հարցաշարերը, այլ փաստաթղթերը, դիտորդի վարքագծի կանոններն ու ուղեցույցը:

2-րդ փուլ - տեղեկատվության հավաքման, դատական նիստերի դիտարկման աշխատանքներ, որի ընթացքում ստացվել են վերլուծության համար անհրաժեշտ տվյալներն ու տեղեկությունները:

3-րդ փուլ - մոնիթորինգի արդյունքների ամփոփման և հրապարակման փուլ, որի ընթացքում իրականացվել է հավաքված տվյալների մշակումը, վերլուծությունը, ամփոփումն ու զեկույցի պատրաստումը:

Վերապատրաստված մոնիթորինգային հանձնախմբերը վերլուծելով տեղեկությունները, մասնակցել են Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում/**Գորիս,Կապան**/ նշանակված դատական նիստերին, և նախապես մշակված հարցաթերթիկների և գնահատման մեթոդների միջոցով ուսումնասիրել զինծառայողների մասնակցությամբ ընթացող դատական նիստերը:

Յուրաքանչյուր դատական նիստից ստացված տեղեկությունների վերաբերյալ ստեղծվել է վերլուծական տվյալների բազա :

Մոնիթորինգի ընթացքում կազմակերպվել են հարցումներ ինչպես բնակչության շրջանում,այնպես էլ զինծառայողների ծնողների , հարազատների, փաստաբանների, դատախազության աշխատակիցների հետ :

2. Ժամկետային զինծառայողներին տրամադրվող անվճար իրավաբանական օգնության իրավունքի օրենսդրական կարգավորումը ⇧

Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը նախատեսված է ՀՀ Սահմանադրության հոդված 64-ով, որտեղ սահմանված է.

Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը ամրագրված է նաև ***Մարդու Իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի հոդված 6-ով:***

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

2.1.Պաշտպանության իրավունքի իրավական հիմքերը

Ըստ ՀՀ ՔԴՕ հոդված 19-ի, նախատեսված են կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանության իրավունքները .

ՀՀ ՔԴՕ Հոդված 19. Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը

1. Կասկածյալը և մեղադրյալն ունեն պաշտպանության իրավունք:

2. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը:

3. Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է համապատասխան դեպքերում գործին մասնակից դարձնել կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցչին:

4. Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով: Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությանը չի սահմանափակում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները:

5. Կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման հիմնական կարգավորող օրենքը, որտեղ կարգավորվում են այն դեպքերը, երբ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, դա ՀՀ Քրեական Դատավարության Օրենսգրքի(ՔԴՕ) ***հոդված 69-ն*** *է,որտեղ* ***զինծառայողներին*** *վերաբերվում է 6-րդ կետը.*

ՀՀ ՔԴՕ Հոդված 69

Քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝

1. այդպիսի ցանկություն հայտնել է կասկածյալը կամ մեղադրյալը.

2. կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով.

3. կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում.

4. կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին.

5. հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է.

6. մեղադրյալը ժամկետային ծառայության զինծառայող է.

7. կասկածյալների կամ մեղադրյալների շահերի միջև կան հակասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի.

8. քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում.

9. կասկածյալը կամ մեղադրյալն անգործունակ է.

10. դատական քննության արագացված կարգի կիրառման դեպքում.

11.դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան։

2.2.Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության օրենսդրական կարգավորումը ⇧

ՀՀ Փաստաբանության մասին օրենքի հոդված 41-ի 5-րդ կետով սահմանված է, որ հանրային պաշտպանություն է համարվում օրենքով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը :

5. Հանրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական գործով կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի, սույն հոդվածով նախատեսված անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.

2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.

3) դատապարտյալներին.

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.

5) Հայրենական Մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.

6) գործազուրկներին.

7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.

9) փախստականներին.

10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներին.

11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.

12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց:

6. Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձանց՝

1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով).

2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ.

3) եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.03.2015թ , թիվ 08/10-Լ որոշմամբ հաստատվել է հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգը, որտեղ 8.2. կետով սահմանված է նաև հանրային պաշտպանի կողմից այլ աշխատանք կատարելու արգելքը.

Հանրային պաշտպանի կողմից այլ աշխատանք կատարելու արգելքը

1. Լրիվ աշխատաժամանակով աշխատող հանրային պաշտպանը իրավունք չունի կատարելու վճարովի այլ աշխատանք ,բացառությամբ Պալատի նախագահի գրավոր համաձայնությամբ(թույլտվությամբ) իրականացվող գիտամանկավարժական և ստեղծագործական գործունեության:

2.Ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատող հանրային պաշտպանի կողմից այլ աշխատանքի կատարումը չպետք է խոչընդոտի անվճար իրավաբանական օգնությունը պատշաճ որակով և ժամանակին տրամադրելուն : Ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատող հանրային պաշտպանները պարտավոր են յուրաքանչյուր ամիս տեղեկատվություն տրամադրել տվյալ ամսվա ընթացքում իրենց կողմից վարած մասնավոր գործերի քանակի,բնույթի և մասնավոր գործերով դատական նիստերի կամ այլ դատավարական (ներառյալ քննչական) գործողությունների մասնակցության միջին ժամաքանակի վերաբերյալ:

http://advocates.am/images/hpg_mrcuyt/HPG-kanonakarg-2015-verjnakan-mart-verjn.pdf

3.Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան և դատավարության գործընթաց

3.1 Դատարանի պայմանները, վայրն ու տեղակայումը:

Դատական իշխանության հեղինակության և դատական նիստերի հրապարակայնության իրական ապահովման և երաշխավորման համար կարևոր նշանակություն ունի նաև դատարանի շենքային պայմանները, տեղակայման վայրն ու հասանելիությունը: Հարկ է նշել, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի և Կապանի նստավայրերը նորակառույց շինություններ են, որոնք գտնվում են քաղաքի կենտրոնական մասերում և ամբողջությամբ հարմարեցված են նիստերի վարման համար : Դատարանի՝ Գորիսի նստավայրի շենքի առաջին հարկում, տեսանելի վայրում տեղադրված է ,,Դատալեքս,, տեղեկատվական համակարգը սպասարկող սարքավորումը, սակայն մոնիթորինգային հանձնախմբերը պարզել են, որ դատարան այցելությունների ընթացքում միշտ անջատված է եղել այդ սարքավորումը : Ըստ դատարաններ այցելած մոնիթորինգի հանձնախմբերի, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Կապանի նստավայրի շենքում նույնպես ,,Դատալեքս,,

տեղեկատվական համակարգը սպասարկող սարքավորումը միշտ անջատված էր , տեղակայված էր սպասասրահի անկյունում և դժվար էր նկատելը :

3.2 www.datalex.am տեղեկատվական համակարգի մատչելիության և արտագնա դատական նիստերի հիմնախնդիրները

ՀՀ դատական դեպարտամենտը, դատական նիստերի անցկացման օրվա, տեղի, ժամի և մնացած տվյալների մասին տեղեկությունը տեղադրում է www.datalex.am պաշտոնական կայքում և դատական նիստերի մասին մոնիթորինգային հանձնախումբը հիմնականում տեղեկատվություն ստանում էր նշված պաշտոնական կայքից : Սակայն ,,Դատալեքս,, տեղեկատվական համակարգում ոչ միշտ էր ճիշտ նշված դատական նիստերի անցկացման վայրի ,ժամի հետ կապված տվյալները:

օրինակ

2016 թ մարտի 21 –ին ժ. 11:00-ին Գորիսում նշանակված էր դատական նիստ N/ ՄԴ3/0015/01/16 , սակայն ըստ ձեռք բերված տեղեկության, նիստը կայացել է Լ.ՂՀ քաղ.Ստեփանակերտում:

Մոնիթորինգի ընթացքում պարզվել է , որ դատական գործերի մի մասը նշված չի լինում ,,Դատալեքս,, տեղեկատվական համակարգում:

օրինակ

2016թ. հուլիսի 27 –ին կայացել է դատական նիստ քաղ.Ստեփանակերտում, որը նշված չէր ,,դատալեքս,, տեղեկատվական համակարգում:

Նշվածները միայն մեկական օրինակներ են ,,Դատալեքս,, տեղեկատվական համակարգի անճշտությունների հետ կապված, որը մեծ խնդիր էր դատական նիստերի մոնիթորինգ անցկացնելու համար :

Խնդրի մասին Իրավունքների Տեղեկատվական Կենտրոն ՀԿ-ն, 13.06.2016թ. նամակով դիմել է արդարադատության նախարարությանը: Նախարարության կողմից ուղարկված պատասխան նամակում նշել են, որ ՀԿ-ի կողմից հայցվող տեղեկատվությանը ՀՀ արդարադատության նախարարությունը չի տիրապետում և փնտրվող տեղեկատվությունը ստանալու նպատակով առաջարկել են դիմել ՀՀ դատական դեպարտամենտ ***/հավելված1/***

ՀՀ դատական դեպարտամենտից 04.08.2016թ. N ԴԴ-4.2. Ե-5056 գրությամբ պատասխանել են, որ ՀԿ-ի կողմից բարձրացված խնդիրն ընդունվել է ի գիտություն և միաժամանակ տեղեկացրել են, որ անհրաժեշտության դեպքում ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից քննվող քրեական գործերով դատական նիստերի անցկացման վայրի մասին տեղեկատվություն կարող ենք ստանալ նույն դատարանի աշխատակազմ հարցում կատարելու միջոցով: ***/հավելված 2/***

Ըստ www.datalex.am կայքի ***2016թ հունիս-հուլիս*** ամիսներին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված է եղել ***151*** դատական նիստ: Մոնիթորինգի ընթացքում կատարված հարցումներից պարզվել է, որ ***151-ից 136*** դատական նիստ կայացել է ք.Ստեփանակերտում: Երևույթը կարգավորված չէ ոչ ՀՀ ներպետական օրենսդրությամբ, ոչ էլ ՀՀ միջազգային համաձայնագրով:

Արտագնա դատական նիստերի անցկացումը խոչընդոտ է հանրության իրազեկվածության և տեղեկատվության մատչելիության տեսանկյունից : Նման պրակտիկան դիտորդների, լրագրողների, գործով հետաքրքրված քաղաքացիների համար նիստին ներկա գտնվելու հետ կապված խնդիրներ կարող է առաջացնել, քանի որ պարզ չէ, թե ինչպես վերջիններս կարող են տեղեկանալ նիստի անցկացման վայրի վերաբերյալ: ՀՀ դատական դեպարտամենտը առաջարկում է հարցում կատարել դատարանի աշխատակազմից, սակայն շատ դեպքերում աշխատակազմը նախապես /օրինակ 2-3 օր առաջ/ չի կարող հաստատել նիստի նշանակման օրվա մասին տեղեկությունը:

3.3. Դատական նիստերի ձգձգումներ

Մոնիթորինգի արդյունքում պարզվել է , որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, զինծառայողներին վերաբերվող դատական նիստերի զգալի մասը հետաձգվում է :

Դատական նիստերի ձգձգումները, երկարաժամկետ հետաձգումները, որպես կանոն, պայմանավորված են ինչպես ամբաստանյալների, այնպես էլ վկաների ու տուժողների՝ զինվորական ծառայության մեջ գտնվելու հանգամանքով: Շատ են դեպքերը, երբ զինծառայողները գործուղման մեջ են լինում,ներգրավված են լինում զորավարժությունների, մարտական հերթապահության մեջ կամ վերակարգերում:

օրինակ 1

2016թ հայ-ադրբեջանական սահմանում ապրիլի 1-4 տեղի ունեցած պատերազմական իրադարձությունների պատճառով,2016թ. ապրիլ ամսում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված 25 դատական նիստ չի կայացել :

օրինակ 2

2016թ. Փետրվար-օգոստոս ընկած ժամանակահատվածում ըստ datalex.am կայքի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված է եղել 510 դատական նիստ, որից 199-ը նոր նշանակված գործեր էին ,իսկ մնացած 311 գործերը կրկնվող գործեր էին:

3.4 Նիստերի ձայնագրառումների և տեսանկարահանումների հետ կապված հիմնախնդիրներ

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ձայնագրառումն ապահովող սարքերն առկա են եղել դիտարկված բոլոր 48 դատական նիստերի

ժամանակ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դատարանի շենքերը նորակառույց են, դահլիճները կահավորված են ստանդարտներին համապատասխան: Ձայնագրառող սարքերը/միկրոֆոնները/ միացվում էին դատական նիստը սկսելուց առաջ՝ կարգադրիչների կողմից:

Դատական նիստերի ժամանակ մոնիթորինգ իրականացնող դիտորդները նիստի ժամանակ տեսանկարահանումներ կատարելու համար նախապես դիմում էին նիստը վարող դատավորին : Դատավորը, կողմերի դիրքորոշումները պարզելուց հետո կամ թույլատրում էր, կամ՝ արգելում: Հարկ է նշել, որ դիտարկված նիստերի ժամանակ դատավարության կողմերը հաճախ հակված չէին, որպեսզի թույլատրվի տեսանկարահանումը :

օրինակ

2016թ մայիսի 5-ին, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում նշանակված ՍԴ20010/01/16 գործով վարույթի ընթացքում մոնիթորինգ իրականացնող դիտորդական խմբի կողմից խնդրվել է թույլատրել նիստի տեսանկարահանումը: Դատավորը հարցրել է կողմերին և սկզբից նիստի ներկա հանրային պաշտպանը հայտնել է անհամաձայնություն տեսանկարահանման համար, որից հետո նույնը հայտնել են նաև դատախազը, մեղադրյալը:

4 Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ժամկետային զինծառայողների մասնակցությամբ նշանակված դատական գործեր

4.1. Նիստերի կայացման վիճակագրություն

Մոնիթորինգի շրջանակներում զինվորական գործերով դատավարությունների դիտարկումներն իրականացվել են 2016թ. մարտի 15-ից մինչև 2016թ. օգոստոսի 28-ը: Նշված ժամանակահատվածում ըստ datalex.am կայքի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված է եղել 344 դատական նիստ, որից կայացել է 234-ը, չի կայացել 96-ը, իսկ 14 դատական նիստերի կայացման կամ չկայացման վերաբերյալ datalex.am կայքում տեղեկությունները դիտարկման օրերին բացակայում էին և տեղադրվել են հետագայում :



Նշանակված 344 դատական նիստերից 321-ը, ըստ մոնիթորինգի հանձնախմբերի կողմից կատարված հարցումների՝ /հեռախոսազանգեր կամ այցելություններ դատարանի նստավայր/ պետք է կայանար ք.Ստեփանակերտում,իսկ 23-ը՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի և Կապանի նստավայրերում (8-ը Կապանում, 15-ը Գորիսում) :

Նշանակված 344 դատական գործերի 34%-ը վերաբերում է ՀՀ ՔՕ-ի *358* հոդվածին, այն է՝ **պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը**, իսկ գործերի 27%-ը վերաբերում է ՀՀ ՔՕ-ի *359* հոդվածին, այն է՝ **զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը, նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում:** Գործերի 39%-ը վերաբերում են ՀՀ ՔՕ-ի 363-1, 177, 360-1, 364-1, 364.2-1, հոդվածներին (***զինծառայողի կողմից իր առողջությանը վնաս պատճառելը, գողություն, զինծառայողին վիրավորանք հասցնելը, զինվորական ծառայությունից հրաժարվելը, զինծառայողների կողմից զորամասում թմրամիջոց գործածելը***):

Նախնական վերլուծությունների արդյունքում պարզ էր դառնում, որ զորամասերում գերակշռում են վերադասի և զինծառայողների միջև միջանձնային հարաբերությունների հետ կապված խնդիրները:

4.2.Զինծառայողներին առաջադրված մեղադրանքների /ՔՕ-ի հոդվածներ/ վիճակագրություն ⇧

Վերլուծությունները դիագրամի և աղյուսակի տեսքով բերված են ստորև.



ՀՀՔՕ հոդված	Հոդվածի հակիրճ նկարագրություն	Նշանակված գործերի քանակը
356	Հրամանը չկատարելը	3
358	Պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը	50
359	Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում	45
360	Զինծառայողին վիրավորանք հասցնելը	12

361	Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը	9
363	Անդամախեղելու, հիվանդության, սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը	14
364	Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը	16
365	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը	6
371	Ռազմական գույքը վատնելը	3
373	Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը	1
375	Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը	3
376	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ	6
377	Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը	2
177	Գողությունը	19
333	Սուտ մատնությունը	3
235	Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը	3
268	Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի	4

4.3 Դատական նիստերի արագացված կարգ

Ծրագրի շրջանակներում մոնիթորինգի հանձնախումբը մասնակցել է 48 դատական նիստի և իրականացրել մանրամասն դիտարկումներ՝ ըստ մոնիթորինգի համար հատուկ մշակված 52 հարցից կազմված հարցաշարի:

Հարկ է նշել, որ զինծառայողներին վերաբերվող դատական նիստերի գերակշիռ մեծամասնությունը տեղի են ունենում արագացված կարգով :

Այսպես, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում դիտարկման ենթարկված 48 դատական նիստերից 39-ը /81%-ը/ տեղի է ունեցել արագացված կարգով:



Ըստ ՀՀ ՔԴՕ հոդված 375[1]-ի *եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը:*

Դիտարկումները ցույց են տալիս, որ հաճախ արագացված կարգը կիրառվում է դատավորների, դատախազների,պաշտպանների միջև նախապես ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում :

Դատական նիստերի ժամանակ դատավորները հաճախ շատ արագ , օրենքով նախատեսված հաջորդականությամբ, հապճեպ հարցադրումներ են կատարում ամբաստանյալին՝ արդյոք պա՞րզ է մեղադրանքը, համաձա՞յն է առաջադրված մեղադրանքի հետ, պնդու՞մ է դատական քննության արագացված կարգ կիրառելու

միջնորդությունը, կամավո՞ր է այն ներկայացրել, խորհրդակցե՞լ է իր պաշտպանի հետ մինչ միջնորդությունը ներկայացնելը և հասկանո՞ւմ է արագացված դատական քննության հետևանքները:

Ամբաստանյալները շփոթված պատասխանում են ,,ԱՅՈ,, հաճախ նայելով պաշտպանի կամ դատախազի կողմը : Ենթադրվում է , որ ամբաստանյալ զինծառայողներին հորդորել են, որպեսզի համաձայնվի կիրառել արագացված դատավարություն: Պաշտպանի կողմից ներկայացված միջնորդության արդյունքում շփոթված ամբաստանյալների կողմից դատախազի կամ պաշտպանների հորդորներով արտաբերված ,այո,-ն հանգեցնում է դատարանի կողմից արագացված կարգի անվերապահ կիրառման: Դիտարկումների ընթացքում ոչ մի դեպք չի արձանագրվել, երբ դատավորները մերժեին արագացված կարգ կիրառելու միջնորդությունը:

Գործերի մեծ մասում նկատվում էր ինչպես պաշտպանների, այնպես էլ դատավորների շահագրգռվածությունը՝ գործն արագացված դատական կարգով քննելու:

Ամբաստանյալները նաև համաձայնվում են արագացված կարգի կիրառմանը, հաշվի առնելով պատիժը 2/3-ի չափով նշանակելու հանգամանքը:

Դիտարկումները ցույց են տվել նաև, որ պաշտպանների, դատախազների, դատավորների ծանրաբեռնվածությունը ևս պատճառ է, որպեսզի փոխհամաձայնության արդյունքում հաճախ կիրառվի դատավարության արագացված կարգ :

5.Հանրային պաշտպանների գործունեության արդյունավետությունն ու ծանրաբեռնվածությունը ⇧

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության խնդիրը, թերևս ամենաակտուալներից մեկն է և առավել հաճախ մատնանշվածը:

Ըստ ՀՀ փաստաբանության մասին օրենքի հոդված 41-ի , անձանց բավականին մեծ ցանկ է նախատեսվում, որոնք իրավունք ունեն ստանալու անվճար իրավաբանական օգնություն: /տես. էջ 10,11/

ՀՀ ՔԴՕ հոդված 69-ով նույնպես նախատեսված են անձինք կամ դեպքեր, որոնց պարագայում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է : Նշված բոլոր դեպքերում պաշտպանը տրամադրվում է հանրային պաշտպանի գրասենյակի կողմից՝ պետության միջոցների հաշվին:

Հանրային պաշտպանի գրասենյակը Սյունիքում ունի ընդամենը 2,25 դրույք հաստիք,որտեղ ընդգրկված են 4 փաստաբաններ: Կապանում աշխատում են 2 հանրային պաշտպաններ, որոնցից մեկը 0.5 դրույքով, մյուսը՝ 1 ամբողջական դրույքով, Սիսիանում 0,25 դրույքով աշխատող հանրային պաշտպան, իսկ Գորիսում 0,5 դրույքով աշխատող հանրային պաշտպան:

Ստորև ներկայացվում է ՀՀ Փաստաբանների Պալատի նախագահի որոշումով հաստատված մարզերում հանրային պաշտպանների հաստիքների բաշխվածությունը:

http://advocates.am/images/hpg_mrcuyt/Havelvac-2016-HPG-marzer-texabashxum.pdf

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 14.01.2016թ.
թիվ 7-Լ որոշման հավելված
Մարզերում հանրային պաշտպանների հաստիքների բաշխվածությունը

հ/հ	Մարզը	Նստավայր	Հաստիքների բաշխում	Հաստիքների ընդ. քանակը	ՀՊ-ների քանակը	Դատարանի նստավայրը
1	2	3	4	5	6	7
1.	Արագածոտն	Աշտարակ	1	1,5	2	Աշտարակ, Ապարան, Թալին
			0,5			
2.	Արարատ	Վեդի	1	3,5	4	Արտաշատ, Մասիս, Վեդի, Եղեգնաձոր, Վայք
		Մասիս	1			
		Արտաշատ	1 / 0,5			
3.	Արմավիր	Արմավիր	1/0,5/0,25	2,75	4	Արմավիր, Էջմիածին
		Էջմիածին	1			
4.	Գեղարքունիք	Գավառ	1	2,5	4	Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ
		Սևան	1			
		Վարդենիս	0,25			
		Մարտունի	0,25			
5.	Կոտայք	Հրազդան	1	3,25	5	Հրազդան, Չարենցավան, Եղվարդ, Աբովյան
		Աբովյան	1 / 0,5			
		Եղվարդ	0,5			
		Չարենցավան	0,25			
6.	Սյունիք	Կապան	1 / 0,5	2,25	4	Կապան, Գորիս, Սիսիան
		Սիսիան	0,25			
		Գորիս	0,5			
7.	Վայոց Ձոր	Եղեգնաձոր	1 / 0,25	1,25	2	Եղեգնաձոր, Վայք
8.	Տավուշ	Իջևան	1/0,5/0,25	2,25	4	Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ
		Բերդ	0,5			
9.	Լոռի	Վանաձոր	1/ 1/1 /0,5	3.75	5	Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի
		Ալավերդի	0,25			
10.	Շիրակ	Գյումրի	1/1/0,5/0,5	3,0	4	Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Աշոցք
Ընդհանուր թիվը				**26**	**38**	

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահ՝ Արա Զոհրաբյան

Հանրային պաշտպանության որակի վրա ազդող բացասական գործոն է նաև այն հանգամանքը, որ պաշտպանի վարձատրության չափը կախված չէ գործերի քանակից և ծանրաբեռնվածությունից : Գործերի տարբեր ծանրաբեռնվածություն ունեցող պաշտպանները վարձատրվում են ֆիքսված աշխատավարձով՝ ըստ համապատասխան դրույքի: Տեսականորեն սա կարող է ազդել հանրային պաշտպանի աշխատանքի արդյունավետության և մոտիվացիայի վրա,նաև առաջացնել շահագրգռվածություն, որպեսզի պակաս դրույքով աշխատող հանրային պաշտպանները այլ դատական գործերով ներգրավվեն որպես վճարովի փաստաբան:

Հիմնախնդրի վերաբերյալ առկա են նաև տարբեր հեղինակավոր զեկույցներ: Օրինակ, ԱՄՆ Պետքարտուղարության Մարդու Իրավունքների 2013թ. տարեկան զեկույցում նշված է ,,… *Մեղադրյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է մեղադրյալներին փաստաբան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Փաստաբանների թվի սղության պատճառով հաճախ այս պարտավորությունը Երևանից դուրս չի ապահովվել,,* :

Խնդրի մասին հստակ անրադարձ կա նաև Եվրոպայի Խորհրդի Մարդու Իրավունքների հանձնակատար՝ Նիլս Մուժնիեկսի 2015թ մարտի 10-ին հրատարակված զեկույցում .

,,…2006 թ. Փաստաբանների պալատի կազմում ստեղծվել է Հանրային պաշտպանի գրասենյակը, որի նպատակը անվճար իրավաբանական օգնության տրամադրումն է հասարակության խոցելի խմբերին: Թեպետ այս համակարգի ստեղծումը անկասկած դրական անհրաժեշտ քայլ էր, մտահոգություններ են արտահայտվել այն առումով, որ աշխատանքային մեծ ծանրաբեռնվածությունը,հանրային պաշտպանների անբավարար թվաքանակը և ցածր աշխատավարձը չեն նպաստում որակյալ իրավաբանական օգնության կազմակերպմանը,հատկապես մարզերում:,,

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված 48 դատական նիստերի մոնիթորինգի արդյունքների վերլուծությունից առկա է հետևյալ վիճակագրությունը.












Հանրային պաշտպանի և մեղադրյալի միջև տեղի ունեցող հաղորդակցման եղանակը
29
27
25
23
21
19
17
15
13
11
9
7
5
3
1
Նիստեր
10
12
7
լավ
վատ
միջին


Վճարովի պաշտպանի և մեղադրյալի միջև տեղի ունեցող հաղորդակցման եղանակը
15
12
9
6
3
0
Նիստեր
10
1
4
լավ
վատ
միջին


Հանրային պաշտպանի հոետորական ձիրքը,խոսքի համոզիչ լինելը (1-10) բալային սանդղակով
Նիստեր
3
1
8
3
3
2
5
2
1
2
Բալ
1
2
3
4
5
6
7
8
9
10


Վճարովի պաշտպանի հոետորական ձիրքը,խոսքի համոզիչ լինելը (1-10) բալային սանդղակով
Նիստեր
0
0
3
1
1
0
1
2
4
3
Բալ
1
2
3
4
5
6
7
8
9
10

⇧ 6. Հարցումներ, հարցազրույցներ հանրային պաշտպանի գործունեության արդյունավետության վերաբերյալ:

Ծրագրի շրջանակներում հարցազրույցներ են կազմակերպվել Սյունիքի մարզում գործող հանրային պաշտպանների , Գորիսի զինվորական կայազորի դատախազի հետ: Նրանք խոսել են իրենց աշխատանքի ծանրաբեռնվածության , Սյունիքի մարզում հանրային պաշտպանի հաստիքի, զինվորների իրավագիտակցության մակարդակի, դատական նիստերի արագացված կարգի մասին:

Մասնավորապես հարցազրույցի մասնակից հանրային պաշտպանները աշխատանքային ծանրաբեռնվածության մասին խոսելիս նշեցին, որ չնայած աշխատում են ծանրաբեռնված ռեժիմով, սակայն իրենց կարծիքով հաստիքները բավարար են , իսկ Գորիսի զինվորական կայազորի դատախազի կարծիքով, արդյունավետ պաշտպանություն իրականացնելու համար մարզում հանրային պաշտպանների հաստիքները քիչ են:

Այն հարցին, *թե ինչու է դատական գործերի մեծ մասն անց կացվում արագացված կարգով*, պաշտպանները,դատախազը նշեցին , որ մեղադրյալի կարգավիճակում գտնվող զինծառայողները արագ ընդունում են իրենց մեղքը, ակնկալելով ավելի մեղմ պատժաչափ և հիմնականում դրանք ,,պարզ,, հանցանքներ են և լրացուցիչ դատաքննության կարիքը չի զգացվում:

Այն հարցին, *թէ եղել են դեպքեր, որ ժամկետային զինծառայողները հրաժարվեն հանրային պաշտպանի ծառայությունից և դիմեն վճարովի փաստաբանի*, դատախազը նշեց, որ հիմնականում ծանր հանցակազմ պարունակող գործերում զինծառայողների ծնողները դիմում են վճարովի փաստաբանի ,մտածելով, եթե հանրային պաշտպանը անվճար է, ապա քիչ արդյունավետ է : Տեսանյութում հնչած կարծիքները ամբողջությամբ հասանելի են https://www.youtube.com/watch?v=BO1vgiVHu0s հղումով:

Անվճար իրավաբանական օգնության մատչելիության և հանրային պաշտպանների գործունեության վերաբերյալ հարցումներ են կատարվել նաև բնակչության շրջանում: Հարցումներն իրականացրել են ՀԿ կամավորականները, ներգրավելով Սյունիքի մարզում բնակվող 100 քաղաքացիների : Հարցվողներից 34-ը ինչ-որ գործերով /հիմնականում քաղաքացիական/ առնչվել էր դատական համակարգի հետ, 66-ը երբևէ առնչություն չէր ունեցել : Հարցին , *թե արդյոք տեղյակ են հանրային պաշտպանի գործառույթներին*, հարցվողներից 19-ը պատասխանել են այո, 25-ը

մասամբ, իսկ 56-ը՝ ոչ: Հարցվողներից միայն 18-ը գիտեին Գորիսում գործող հանրային պաշտպանի մասին :

Հարցին, *եթե անհրաժեշտության կարիք լիներ ում կդիմեիք*, քաղաքացիներից 45-ը պատասխանել են, որ կդիմեն վճարովի փաստաբանին , 24-ը՝ հանրային պաշտպանին, 31 մարդ դժվարացել է պատասխանել :

Հարցումներ են իրականացվել նաև դատական գործերում ներգրավված ժամկետային զինծառայողների ծնողների հետ, որոնք հայտնել են իրենց մտահոգությունը հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության վերաբերյալ:

Օրինակ N: ՍԴ3/0085/01/16 դատական գործով մեղադրյալ զինծառայողի ծնողը իր կարծիքը հայտնեց, ըստ որի, հանրային պաշտպանը օրական մասնակցում է 6-7 դատական նիստի և տրամաբանորեն նրանից չի կարելի ակնկալել արդյունավետ պաշտպանություն :

7.Ամփոփում ⇧

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված զինվորական գործերի դիտարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրել որոշակի համակարգային և պրակտիկ հիմնախնդիրներ՝ անվճար իրավաբանական օգնության տրամադրման մատչելիության ոլորտում:

Ծրագրի շրջանակներում դիտարկված 48 դատական նիստերում ներգրավված են եղել 58 զինծառայողներ : Դիտարկված նիստերից ոչ մեկում արդարացման դատավճիռ չի կայացավել :

48 դատական նիստերից 4-ում մեղադրյալները հրաժարվել են պաշտպանից, 29-ը նիստում ներգրավված է եղել հանրային պաշտպան, 15–ում վճարովի հիմունքներով փաստաբան: Պաշտպանից հրաժարված մեղադրյալները զինծառայողներ էին, սակայն ոչ պարտադիր ժամկետային:

Դիտարկված 48 դատական նիստերից 39-ը արագացված կարգով էր, 3-ը ընդհանուր, 6 դատական նիստ հետաձգվել է :

Դիտարկումների արդյունքներն արձանագրում են, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններից ամենատարածվածներն են պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը (34%), զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային հարաբերությունները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության պայմաններում (27%), ինչպես նաև զինծառայողին վիրավորանք հասցնելը , զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը, գողությունը, անդամախեղելու, հիվանդության, սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը:

Դատական նիստերի հրապարակայնության, թափանցիկության ապահովման տեսանկյունից խնդրահարույց է զինծառայողներին վերաբերող արտագնա դատական նիստերի անցկացումը:Դիտորդների, լրագրողների համար նիստին ներկա գտնվելու հետ կապված խնդիրներ են առաջացնում ,,Դատալեքս,, տեղակատվական համակարգում նիստերի ժամանակացույցում նշված դատարանի վայրի և պրակտիկայում դատական նիստի կայացման վայրի անհամապատասխանությունը: Ըստ **Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի՝** *պետությունն է կրում պարտականություն ձեռք առնելու համապատասխան միջոցներ՝ ապահովելու հասարակության և լրատվամիջոցների տեղեկացվածությունը իրականացվող դատական նիստի տեղի և ժամանակի մասին, ինչպես նաև նրանց արդյունավետ մուտքը նիստին:*

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի և Կապանի նստավայրերի շենքային պայմանները հիմնականում համապատասխանում են ստանդարտներին, քանի որ նորակառույց շինություններ են, սակայն դատարանների շենքի ներսում տեղադրված ,,Դատալեքս,, տեղեկատվական համակարգը սպասարկող սարքավորումները դիտարկման ժամանակահատվածում միացված /աշխատող վիճակում/ չեն գտնվել:

Մոնիթորինգի միջոցով դիտարկված զինծառայողների մասնակցությամբ նշանակված 48 դատական նիստերից 39-ը (81%) կայացել են արագացված կարգով: Դիտարկումները ցույց են տալիս, որ արագացված կարգի կիրառումը, որպես կանոն, դատախազների, դատավորների և պաշտպանների միջև ձեռք բերված փոխադարձ համաձայնության այդյունք է, որի ընթացքում ոչ միշտ են հաշվի առնվում ամբաստանյալների օրինական շահերը : Ամբաստանյալները հաճախ համաձայնվում են արագացված կարգին՝ նկատի ունենալով պատժի 2/3 չափի նշանակման հնարավորությունը:

Սյունիքի մարզում աշխատում են 4 հանրային պաշտպաններ, որոնց բաշխվածությունը իրականացված է ընդամենը 2.25 հաստիքի շրջանակներում : Կապանում աշխատում են 2 հանրային պաշտպաններ, որոնցից մեկը 0.5 դրույքով, մյուսը՝ 1 ամբողջական դրույքով, Սիսիանում 0,25 դրույքով աշխատող հանրային պաշտպան, իսկ Գորիսում 0,5 դրույքով աշխատող հանրային պաշտպան:

Դիտարկումները ցույց են տվել, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում նշանակված գործերի շրջանակներում հաճախ 1 հանրային պաշտպանը 1 օրվա մեջ պետք է հասցնի մասնակցել 6-7 դատական նիստի:

Մոնիթորինգի շրջանակներում կատարված հարցումներից կարելի եզրակացնել, որ դատական գործընթացներում ներգրավված զինծառայողների ծնողները առավել բարդ գործերով դիմում են վճարովի փաստաբանի :

Հարցման ենթարկված 100 քաղաքացիներից այն հարցին ՝ եթե *անհրաժեշտության կարիք լիներ ում կդիմեիք* , 45-ը պատասխանել են, որ կդիմեն վճարովի փաստաբանին , 24-ը՝ հանրային պաշտպանին, 31 մարդ դժվարացել է պատասխանել: :

Հանրային պաշտպանների պարտադիր մասնակցության պայմանները ամրագրված են ՀՀ ՔԴՕ հոդված 69-ի 6-րդ կետով, ըստ որի պաշտպանի մասնակցությունը

պարտադիր է նաև, երբ մեղադրյալը /օրենքում գրված է միայն մեղադրյալը/ զինծառայող է : Պարզ է, որ առաջին անգամ զինծառայողները հարցաքննվում են հենց կասկածյալի կարգավիճակում : Օրենսդրական նման կարգավորումը , որտեղ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է միայն երբ զինծզառայողները մեղադրյալի կարգավիճակում են , լուրջ խնդիր է : Պաշտպանի բացակայության պայմաններում առավել հավանական է կասկածյալի կարգավիճակում գտնվող զինծառայողներից խոստովանական ցուցմունքների կորզումը և նրանց այլ դատավարական իրավունքների խախտումները:

8. Առաջարկություններ

- Օրենսդրությամբ պաշտպանի պարտադիր մասնակցություն նախատեսել նաև նախաքննչական, քննչական գործընթացներում ներգրավված կասկածյալի կարգավիճակում գտնվող զինծառայողների համար /ՀՀ ՔԴՕ Հոդված 69 /

- Օրենսդրությամբ ընդլայնել պաշտպանի պարտադիր մասնակցության շրջանակը՝ ներառելով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող տուժողների և վկաների համար պարտադիր անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

- Օրենսդրությամբ ապահովել մեխանիզմներ, որի արդյունքում ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատող հանրային պաշտպանի կողմից այլ աշխատանքի կատարումը չխոչընդոտի անվճար իրավաբանական օգնությունը պատշաճ որակով և ժամանակին տրամադրելուն:

- Ավելացնել Սյունիքի մարզում գործող հանրային պաշտպանների հաստիքները:

- Հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածության նվազեցման և ծառայությունների որակական չափանիշների բարձրացման նպատակով կատարել աշխատանքների տարանջատում՝ ըստ քրեական գործերով պաշտպանների պարտադիր մասնակցության և ըստ անվճար իրավաբանական օգնության իրավունք ունեցող քաղաքացիների հետ աշխատանքի:

- Ներդնել հանրային պաշտպանների գործունեության թափանցիկության և հանրության առջև հաշվետվողականության մեխանիզմներ: /օրինակ մարզում գործող հանրային պաշտպանների տարեկան հաշվետվություն, հանրային քննարկում, մամլո ասուլիս/

- Ձեռնարկել միջոցառումներ հանրային պաշտպանների նկատմամբ հասարակական վստահության բարձրացման ուղղությամբ:

- Դատական նիստերի ժամանակացույցերի, դատական գործերի, նիստի կայացման վայրի վերաբերյալ դատական դեպարտամենտի գործող պաշտոնական www.datalex.am կայքում առկա տեղեկատվությունը համապատասխանեցնել իրականում տեղի ունեցող դատական նիստերի վայրի հետ:

- Դատական քննության արագացված կարգի կիրառումը պետք է բխի մեղադրյալի կարգավիճակում գտնվող զինծառայողի շահերից և բացառվի դատական կողմերի ստվերային համագործակցությունը :

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
էլ. փոստ armen.gevorgyan@justice.am

№ 10/19.3/7450-16
«15» 06 2016թ.

«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՄԱՐԱՏ ԴԱԴՈՒՆՑԻՆ
Ք. ԳՈՐԻՍ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 2

Հարգելի պարոն Դադունց,

Ի պատասխան Ձեր՝ 2016 թվականի հունիսի 13-ի դիմումի՝ հայտնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավանորմի պահանջները՝ տեղեկացնում եմ, որ Ձեր կողմից հայցվող տեղեկատվությանը ՀՀ արդարադատության նախարարությունը չի տիրապետում: Փնտրվող տեղեկատվությունը ստանալու նպատակով առաջարկում եմ դիմել ՀՀ դատական դեպարտամենտ:

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Մալվինա Հարությունյան
Օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչություն
Հեռ. (010) 59 40 67

Հավելված 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ: (00 37410) 511794, Ֆաքս: (00374 10) 511771

№ ԴԴ-4.2. Ն-5056

«04» օգոստոսի 2016թ.

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Մ. ԴԱԴՈՒՆՑԻՆ
(ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Անկախության 2)

Հարգելի՛ պարոն Դադունց,

Ի պատասխան ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին հասցեագրված Ձեր 13.06.2016թ. թիվ 12-16 գրության տեղեկացվում է, որ դրանով բարձրացված խնդիրն ընդունվել է ի գիտություն:

Միաժամանակ տեղեկացվում է, որ անհրաժեշտության դեպքում ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից քննվող քրեական գործերով դատական նիստերի անցկացման վայրի մասին տեղեկատվություն կարող եք ստանալ նույն դատարանի աշխատակազմ հարցում կատարելու միջոցով՝ նշելով համապատասխան քրեական գործերի համարները:

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՌՇՏՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆ

Կատարող՝ Դատական վիճակագրության վարման
և ամփոփման բաժին, հեռ. 51-17-94

Հավելված 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
КАНЦЕЛЯРИЯ ОБЩЕСТВЕННОГО ЗАЩИТНИКА
ПАЛАТА АДВОКАТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
THE PUBLIC DEFENDER'S OFFICE

ՀՀ, Երևան, Զաքիյան 2, Ереван, ул. Закияна 2; +374 10604605 (ֆաքս; fax)
Էլ. փոստ (e-mail): pashtpan@advocates.am

Ե-463 «03» 08 2016թ.

«Իրավունքների տեղեկատվական կենտրոն»
ՀԿ նախագահ պարոն Մարատ Դադունցին

Հարգելի պարոն Դադունց,

Ի պատասխան Ձեր 13.06.2016թ. թիվ 13-16 գրության.

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակը հայտնում է իր պատրաստակամությունը՝ համագործակցելու անվճար իրավաբանական օգնության տրամադրման ոլորտում իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Միաժամանակ, սակայն, հաշվի առնելով հանրային պաշտպանների գերծանրաբեռնված լինելու հանգամանքը՝ խնդրում եմ Ձեր կողմից նախատեսվող քննարկումները և հանդիպումները պլանավորելիս նախապես համաձայնեցնել հանրային պաշտպանների հետ, ինչպես նաև հնարավորինս նվազագույնի հասցնել հանրային պաշտպանների համար լրացուցիչ աշխատանքի կատարումը:

Հայտնում եմ նաև, որ հանրային պաշտպանի գրասենյակի և հանրային պաշտպանների վերաբերյալ տեղեկատվությանը, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ վիճակագրական տվյալներին և ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում՝ www.advocates.am՝ «Հանրային պաշտպանի գրասենյակ» բաժնում:

Հարգանքով,

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
հանրային պաշտպանի գրասենյակի
ղեկավար Մելանյա Առուստամյան